ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

05.10.2023

Սիրելի՛ ուսուցիչներ

Հոկտեմբերի 5-ը ուսուցչի մեծարման, նրա աշխատանքի գնահատման օրն է, ու մասնագիտական տոնի կապակցությամբ ձեզ եմ փոխանցում իմ ամենաջերմ մաղթանքները, խոնարհումն ու երախտագիտությունը, շնորհակալությունը՝ նվիրումի ու անչափ պատասխանատու առաքելության համար:

Գիտեմ՝ շատերիդ հոգում այս բարդ ժամանակաշրջանում անհանգստություն է հայրենիքի սահմանների, տեղահանված մեր հայրենակիցների, բազում երիտասարդ կյանքերի կորստի համար, բայց այսօր հենց ձեզնից, առավել քան երբևէ, ուժ և տոկունություն եմ ակնկալում ամենօրյա աշխատանքում: Քանզի դուք եք կրթում, դաստիարակում հայրենասեր, մարտնչող ոգով զինվորին, երկրի զարգացումն ապահովող ապագա մասնագետներին: Խնդրում եմ՝ շարունակե՛ք դասարան մտնել այն գիտակցումով, որ ամուր հայրենիքի հիմքը դնողը, մեր երկրի քաղաքացու մեջ ճիշտ արժեքներ, պայքարի ուժ, հաղթանակի հավատ սերմանողը դո՛ւք եք՝ որակյալ կրթություն ապահովելով:

Բոլորիս համար է պարզ, որ հաղթանակ պետք է տանի ոչ միայն զինվորը, այլև գիտնականը, արվեստագետը, բժիշկն ու արհեստավորը, և դո՛ւք եք սովորեցնում ամուր լինել կյանքի ճանապարհին:

Խնդրում եմ նաև հնարավորինս արագ ու ջերմորեն ինտեգրել և ուսման բնականոն հուն ապահովել ԼՂ-ից մեր մարզում հաստատված աշակերտների համար, աշխատանքային մթնոլորտ՝ ձեր շարքերը համալրող գործընկեր մանկավարժների համար:

Եվս մեկ անգամ շնորհակալություն՝ ձեր կատարած աշխատանքի, չմարող խանդավառության, համբերատարության, իմաստնության և աշակերտների հանդեպ սիրո համար:

Խաղաղություն եմ մաղթում Հայոց երկրին և այնպիսի միջավայր ու անհոգ ուսումնական առօրյա մեր կրթօջախներում, որ մտածեք միմիայն սաներին կրթելու մասին: